ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«20» 12 2023 թ. Թիվ 304-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 142-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 18-ի «Դատարանի որոշմամբ կիրառվող խափանման միջոց ընտրելու, միջնորդությունները դատարան ներկայացնելու, ձերբակալման գործընթացները, ինչպես նաև մինչդատական ակտերի վիճարկման վարույթով դատարանի պահանջած նյութերը ներկայացնելը պատշաճ կազմակերպելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 17-ի թիվ 126-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 142-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման) 1-ին կետի 8-րդ ենթակետի վերջակետը փոխարինել միջակետով:

2. Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ ենթակետով.

«9) դատարանի կողմից տնային կալանքը կամ վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հրապարակելուց անմիջապես հետո հետամուտ լինել քննիչի կողմից որպես համակցված խափանման միջոց բացակայելու արգելքի կիրառմանը:»:

3. Հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետի վերջակետը փոխարինել միջակետով:

4. Հրամանի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) դատարանի կողմից տնային կալանքը կամ վարչական հսկողությունը կիրառելու մասին որոշումը հրապարակելուց անմիջապես հետո որպես համակցված խափանման միջոց կիրառել բացակայելու արգելքը և Կոմիտեի նախագահի՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 91-Լ հանձնարարականով սահմանված կարգով համապատասխան տվյալներն ուղարկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն:»:

5. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին և մյուս ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ